

Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում

Էկոհամակարգային ծառայությունները Հայաստանում. ՀՀ
կառավարության և տարբեր կազմակերպությունների կողմից 2011-2017 թթ.
ընթացքում իրականացված գործողությունների ամփոփ նկարագիր



Հեղինակներ՝ Նանե Շահնազարյան
Աշոտ Հարությունյան

Հաշվետվություն

Ապրիլ, 2017թ.

Նախաբան

Վերջին տարիներին կտրուկ աճել է էկոհամակարգերի դերի ու արժեքի, ինչպես նաև դրանց ծառայությունների միջոցով կյանքի որակի բարելավման նկատմամբ հանրության հետաքրքրությունը: Բնական պաշարների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում էկոհամակարգային մոտեցման կիրառումը կարող է օգնել կառավարություններին, տեղական համայնքներին և այլ շահագրգիռ կողմերին բազմաթիվ օգուտներ ապահովել հողօգտագործողների, հողի սեփականատերերի ու հասարակության համար: Հայաստանում էկոհամակարգային մոտեցման համակողմանի ըմբռնումը և հեռանկարային կառավարման փորձը բացակայում են:

2016 թ. նոյեմբերի 4-ին ՀՀ բնապահպանության նախարարությունը (ԲՆ) Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) և «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա» (ԵԿԱ) հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ և ԳՄՀԸ-ի Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը (ԿԻԿ) Հարավային Կովկասում ծրագրի աջակցությամբ կազմակերպեց կլոր սեղան-քննարկում, որի նպատակը՝ էկոհամակարգային ծառայությունների վերաբերյալ իրազեկության բարձրացումը և այդ թեմայով համապատասխան շահագրգիռ կողմերի միջև հանրային քննարկման նախաձեռնումն էր: Քննարկման արդյունքներից մեկն ընդհանուր համաձայնության ձևով բերումն էր, որ Հայաստանում շահագրգիռ կողմերի շրջանում էկոհամակարգային ծառայությունների թեմայով առ այսօր իրականացված, ընթացիկ և նախատեսվող (պիլոտային) նախագծերի վերաբերյալ տեղեկատվության պակաս գոյություն ունի: Այս տեղեկատվությունը կարող է որպես հիմք ծառայել հետագա գործունեությունների ու նախատեսվող պիլոտային ծրագրերի համար, ինչպես նաև թույլ կտա հաշվի առնել քաղաքացիներն ու խուսափել կրկնություններից:

Սույն ուսումնասիրության նպատակը Հայաստանում էկոհամակարգային ծառայությունների (ԷԾ) թեմայով առ այսօր իրականացված, ընթացիկ և նախատեսվող (պիլոտային) ծրագրերի, այդ թվում՝ գրանցված արդյունքների ու քաղաքացիների նկարագրի ապահովումն է, որը թույլ կտա Հայաստանում շահագրգիռ կողմերի շրջանում ԷԾ գործողությունների վերաբերյալ տեղեկատվական

բացը լրացնել:

Ուսումնասիրությունն իրականացվել է ազգային խորհրդատու Նանե Շահնազարյանի կողմից՝ ԳՄՀԸ ԿԻԿ ծրագրի աջակցությամբ: Հաշվետվության կազմման մեջ իր ներդրումն է ունեցել Աշոտ Հարությունյանը: Հաշվետվությունը չի պարունակում ԳՄՀԸ որևէ դիրքորոշում:

Սույն հաշվետվության մեջ ծրագրերի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը ձեռք է բերվել հանրային աղբյուրներից և ազգային մարմինների, միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների ներկայացուցիչների, ինչպես նաև ազգային ու միջազգային փորձագետների հետ հարցազրույցների արդյունքում:

Ամփոփ նկարագիր

Վերջին տարիներին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել մի շարք ռազմավարական ծրագրերի, որոնցում նախատեսվում են էկոհամակարգային ծառայությունների (ԷԾ) և էկոհամակարգային ծառայությունների վճարների (ԷԾՎ) գաղափարախոսության ներդրման հետ կապված գործողություններ՝ չնայած, որ էկոհամակարգային ծառայությունների հասկացությունը Հայաստանում դեռևս նոր է և դրա օգտագործումը կենսաբազմազանության պահպանությանն առնչվող օրենքներում և այլ նորմատիվ ակտերում սահմանափակվում է էկոհամակարգային ծառայությունների առանձին տեսակների նկարագրությամբ և որոշ մանրամասների ներկայացմամբ:

Սույն հաշվետվության մեջ ներկայացված է Հայաստանի Հանրապետությունում ԷԾ և ԷԾՎ վերաբերյալ օրենսդրությունը, ինչպես նաև էկոհամակարգային ծառայությունների ոլորտում ՀՀ կառավարության կողմից իրականացված գործողությունները, քայլերն ու արդյունքները: Այն ներառում է միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից իրականացված ԷԾ և ԷԾՎ նախագծերի վերլուծությունը, որոնք ուղղված են ազգային օրենսդրության և, այսպիսով, որոշների կայացման գործընթացում ԷԾ և ԷԾՎ գաղափարախոսության ներդրմանը և ընդգրկմանը: Ներկայացված են նաև որոշ առաջարկություններ և ընկալումներ:

Հաշվետվության մեջ զետեղված են նաև էկոհամակարգային ծառայությունների գաղափարի ներդրման գործընթացում առաջընթացի ձեռքբերմանն ուղղված հետագա հնարավորությունները, առաջարկություններն ու մոտեցումները:

Հաշվետվությունը կարող է ծառայել որպես լավ տեղեկատվական և ելակետային աղբյուր թե՛ պետական մարմինների և թե՛ միջազգային դոնոր կազմակերպությունների համար՝ էկոհամակարգային ծառայությունների վերաբերյալ կոնկրետ գործողությունների, ծրագրերի և համապատասխան ուսումնասիրությունների իրականացման տեսանկյունից:

Չնայած նրան, որ երկրի օրենսդրությունը կարող է մեծապես նպաստել ԷԾՎ ծրագրերի իրականացմանը, պետք է նշել, որ ԷԾՎ մեթոդներից շատերը խիստ արդյունավետ են նույնիսկ նման օրենսդրության բացակայության պայմաններում: ԷԾ գնորդները կարող են հետաքրքրված լինել մի շարք ոչ օրենսդրական գործոններով, որոնց թվում են՝

- Շահագործման և պահպանման ծախսերի կրճատումը
- Ռիսկերի կրճատումը (ապահովելով անհրաժեշտ բնական պաշարների մատակարարումը)
- Ներդրողների վստահության ամրապնդումը, և
- Իմիջի բարելավում:

ԷԾՎ սխեմաների հաջողության բացարձակ նախապայմանը դրանց հավասարակշռումն ու մտածվածությունն են, որոնք կախված չեն ԷԾՎ վերաբերյալ օրենսդրության առկայությունից կամ բացակայությունից: ԷԾՎ սխեմաների վերաբերյալ համաձայնությունը կհաջողվի, եթե.

- Էկոհամակարգային ծառայությունների տրամադրումը վտանգված է, սակայն ֆինանսապես արժեքավոր է մեկ կամ ավելի գնորդների համար,
- Հատուկ ռեսուրսների կառավարման միջոցառումները կարող են բարելավել ծառայության որակը և/ կամ ծավալը, և
- Այդ միջոցառումների արդյունքները կարող են չափվել:

Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության կողմից պատվիրված և Ավստրիական զարգացման համագործակցության կողմից համաֆինանսավորվող Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում (ԿԻԿ) ծրագրի նպատակն է մշակել ռազմավարություններ ուղղված կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների կայուն կառավարմանը ոլորտային և վարչական շրջանակներում:

ԳՄՀԸ ԿԻԿ ծրագիրը իր գործընկերների հետ համատեղ իրականացնում է հետևյալը՝

1. Աջակցում է կենսաբազմազանության կայուն կառավարմանը և էկոհամակարգային ծառայություններին ուղղված ռազմավարության, միջոլորտային քաղաքականության և օրենքների մշակմանը:
2. Նպաստում է կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների համար մոնիտորինգային համակարգի մշակմանը և միջնախարարական երկխոսության դյուրացմանը:
3. Պիլոտային տարածքներում փորձարկում և տեղական մակարդակում ընդունում է կենսաբազմազանության կայուն կառավարման և էկոհամակարգային ծառայությունների համալիր և համակարգված մոտեցումները:
4. Բարելավում է կենսաբազմազանության կարևորության վերաբերյալ հանրության իրազեկումը՝ աջակցելով ուսումնական հաստատությունների կարողությունների զարգացմանը, ազգային քարոզարշավների իրականացմամբ և բնապահպանական կրթության կենտրոնների բարելավմամբ:
5. Խթանում է կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների բնագավառում ունեցած մասնագիտական փորձի փոխանակումը 3 երկրների միջև:

Բովանդակություն

Նախաբան.....	iii
Ամփոփ նկարագիր.....	v
Հապավումների ցանկ	ix
1. Ներածություն.....	1
2. Էկոհամակարգային ծառայությունների ոլորտում ՀՀ կառավարության կողմից իրականացված գործողությունների, քայլերի և արդյունքների ներկայացում.....	4
3. Միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրեր	10
3.1 ՄԱԲԾ/ՄԱԶԾ «Էկոհամակարգային ծառայությունների տնտեսական գնահատումը Հայաստանում».....	10
3.2 ԿՏԲԿ: «Աջակցություն Հարավային Կովկասի լեռնային շրջաններում կենսաբազմազանության պահպանման քաղաքականության և պրակտիկայի զարգացմանը»	16
3.3 ՄԱԿ ԵՏՀ: «Էկոհամակարգային ծառայությունների վճարների սխեմաների ներդրում հայաստանի վերին Հրազդանի պիլոտային գետավազանում».....	21
3.4 «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք (ԵՀԳԳ) Արևելյան երկրներում. անտառային օրենսդրության կիրառման և կառավարման բարելավման ծրագիր 2 (ENPI FLEG 2)»	24
Ընդհանուր նպատակ.....	24
4. Եզրակացություններ	28
5. Հղումներ.....	34
6. Հավելվածներ.....	36

Հապավումների ցանկ

ԲԿ (NC) Բնական կապիտալ

ԷՕԸՄԴ (CICES) ԷՕ ընդհանուր միջազգային դասակարգում Common International Classification of Ecosystem Services

ԿԲԿ (CBD) Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա

ԲՀՊՏ (SPNA) Բնության հատուկ պահպանվող տարածք

ԷԿԿ (SEM) Էկոհամակարգերի կայուն կառավարում

ԷԿՏՆ (TEEB) Էկոհամակարգերի և կենսաբազմազանության տնտեսական նշանակություն

ԷՕ (ES) Էկոհամակարգային ծառայություն

ԳԷՀ (GEF) Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ

ՄԱԲԾ (UNEP) ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր

ՄԶԾ (UNDP) ՄԱԿ-ի զարգացման ծրագիր

ԱԲՆ (PEI) Աղքատության և շրջակա միջավայրի նախաձեռնություն

ԿՀԿ (IbiS) Կենսաբազմազանության համապարփակ կառավարումը Հարավային Կովկասում

ԲՊՄՄ (IUCN) Բնության պահպանության միջազգային միություն

ԿԱՌԳԾ (NBSAP) Կենսաբազմազանության ազգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր

ՀԲ (WB) Համաշխարհային բանկ

ԲՀՀ (WWF) Բնության համաշխարհային հիմնադրամ

ՊՏ (PA) Պահպանվող տարածք

ՄԱԿ (UN) Միավորված ազգերի կազմակերպություն

ԱԿՊ (FMP) Անտառկավառարման պլան

ԷՕՎ (PES) Էկոհամակարգային ծառայությունների վճարներ

ՀՀ (RA) Հայաստանի Հանրապետություն

ԵՄԶՆ (EUWI) Եվրոպական միության ջրային նախաձեռնության

ԶՌՀԿ (IWRM) Զրային ռեսուրսների համապարփակ կառավարում

EU Եվրոպական միություն

ԵՀՀԳ (ENPI) Եվրոպական հարևանության և համագործակցության գործիք

ԱՕԿԿԲ (FLEG) Անտառային օրենսդրության կիրառման և կառավարման

բարելավում

ԳՏՀԶՆ (BMZ) Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական

համագործակցության և զարգացման նախարարություն

1. Ներածություն

Էկոհամակարգային ծառայությունները (ԷԾ) էկոհամակարգերից մարդկանց ստացած օգուտներն են: Էկոհամակարգերի միջոցով ապահովվող էկոհամակարգային ծառայությունների տարբեր կատեգորիաները ներառում են. ապահովող ծառայություններ՝ սնունդ, ջուր, բնափայտ և այլն, կարգավորող ծառայություններ՝ ազդում են կլիմայի, ջրահոսքերի, հիվանդությունների, թափոնների և ջրի որակի վրա, մշակութային ծառայություններ՝ ապահովում են ռեկրեացիոն, գեղագիտական և հոգևոր օգուտներ, ինչպես նաև աջակցող ծառայություններ՝ հողի ձևավորում, ֆոտոսինթեզ և սննդային նյութերի հոսքեր:

«Էկոհամակարգերը» բուսական, կենդանական ու միկրոօրգանիզմների համակեցությունների և որպես ֆունկցիոնալ միավոր դրանց հետ փոխազդող անկենդան միջավայրի դինամիկ համալիրներ են: «Էկոհամակարգային ծառայությունները» մարդկային բարեկեցության ապահովման նպատակով էկոհամակարգերի ուղղակի և անուղղակի ներդրումներն են: ¹ «Էկոհամակարգային ապրանքների և ծառայությունների» հասկացությունը էկոհամակարգային ծառայությունների հոմանիշն է: Դրամական առումով այդ ապրանքների և ծառայությունների գնահատումը համարժեք է «Էկոհամակարգային ծառայությունների գնահատմանը»:²

Էկոհամակարգի կառավարում – շրջակա միջավայրի և բնական պաշարների ինտեգրված կառավարման ռազմավարություն, որը նպաստում է արդյունավետ պահպանությանը և կայուն օգտագործմանը՝ հիմնվելով էկոհամակարգերը շեշտադրող համապատասխան գիտական մեթոդաբանությունների կիրառման վրա, որը ներառում է օրգանիզմների և դրանց բնական միջավայրերի միջև տեղի ունեցող գործընթացները, գործառույթները և փոխազդեցությունները, և

¹The Economics of Ecosystems and Biodiversity (TEEB) is a leading approach to defining ecosystem services. TEEB identifies four broad types of ecosystem services: provisioning services (such as water, nutrition, biomass, pharmaceuticals, etc.), regulating services (such as carbon sequestering, water purification, pest and disease control, etc.), cultural services (such as intellectual or spiritual inspiration, recreational experience, etc.), and habitat services (such as providing habitat for migratory species helping sustain a diverse gene pool, etc.).

² <http://www.teebweb.org/>

ընդունելով, որ մարդիկ իրենց մշակութային բազմազանությամբ էկոհամակարգերի անբաժանելի մասն են:

Էկոհամակարգային ծառայությունների վճարներ (ԷԾՎ) - վաճառողների և գնորդների միջև բնապահպանական ապրանքների և ծառայությունների վերաբերյալ պայմանավորվածություն, որի դեպքում վճարողները լիովին գիտակցում են ինչի համար են վճարում, իսկ վաճառողները նախաձեռնողական և միտումնավոր կերպով ներգրավվում են ծառայությունների տրամադրումն ապահովող ռեսուրսօգտագործման պրակտիկաներում:

Գաղտնիք չէ, որ Հարավային Կովկասի գլոբալ կարևորության կենսաբազմազանությունը ներկայումս վտանգված է: Մինչդեռ կենսաբազմազանությանն առնչվող գոյություն ունեցող ազգային ռազմավարություններն ու գործողությունների ծրագրերը թույլ են տալիս ապահովել կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների կառավարումը՝ դրանք տարբեր կողմերի միջև անբավարար կոորդինացման պատճառով տարբեր ոլորտների միջև հակասություններ են առաջացնում:

ՀՀ ազգային օրենսդրության շրջանակներում «էկոհամակարգ» եզրույթը ընդամենը մի քանի անգամ է օգտագործվում: Այն հանդիպում է ՀՀ անտառային օրենսգրքի 3-րդ հոդվածում³ և «Հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում⁴: Այն հանդիպում է նաև «Բուսական և կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքում: Սակայն բոլոր այս օրինակներում ևս «էկոհամակարգ» տերմինի համարժեք սահմանում չի տրվում:

ՀՀ գործող օրենսդրությունն ինչպես բնական պաշարների օգտագործման, այնպես էլ դրանց պահպանության համար որևէ գնահատման մեթոդաբանություն չի սահմանում:

³<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=21354>

⁴<http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=29624>

Միջազգային և տարածաշրջանային ջանքերն ուղղված են էկոհամակարգային ծառայությունների ստանդարտացմանը, որը թույլ կտա հեշտացնել էկոհամակարգային ծառայությունների գնահատումը, որպես բնապահպանական ոլորտի հաշվետվողականության ապահովման գործիք: Միջազգային մակարդակում, մշակման փուլում գտնվող էկոհամակարգային ծառայությունների նոր դասակարգումը կոչվում է էկոհամակարգային ծառայությունների ընդհանուր միջազգային դասակարգում (CICES):

Ի թիվս Հայաստանի կողմից վավերացված այլ միջազգային բնապահպանական համաձայնագրերի, էկոհամակարգային մոտեցման առնչությամբ առավել հաճախ է հիշատակվում Կենսաբազմազանության մասին կոնվենցիան (ԿԿ): «էկոհամակարգ» տերմինն օգտագործվում է կոնվենցիայի տեքստում և սահմանված է դրա 2-րդ հոդվածում: ԿԿ իրականացման շրջանակներում էկոհամակարգային մոտեցումը խիստ շեշտադրվում է, չնայած նրան, որ ԿԿ տեքստում «էկոհամակարգային ծառայություն» և «էկոհամակարգային ծառայությունների գնահատում» տերմիններն ուղղակիորեն չեն հանդիպում: ԿԿ իրականացման 12 սկզբունքներից մեկում օրինակ սահմանվում է, որ «էկոհամակարգային ծառայությունների պահպանման նպատակով էկոհամակարգի կառուցվածքի ու գործունեության պահպանությունը պետք է լինի էկոհամակարգային մոտեցման առաջնահերթ թիրախներից»:⁵

⁵Սկզբունք #5 in www.cbd.int/ecosystem. The series of CBD Conferences of the Parties decions placing emphasis on an ecosystem services approach is also available from the same site.

2. Էկոհամակարգային ծառայությունների ոլորտում ՀՀ կառավարության կողմից իրականացված գործողությունների, քայլերի և արդյունքների ներկայացում

1-ին Քայլ. Էկոհամակարգային ծառայությունների գաղափարախոսության ներդրման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում սկսվել է դեռևս 2011թվականին, երբ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակիցը մասնակցեց 2011 թվականի մարտ ամսին Մոսկվայում Ռուսաստանի Դաշնության վայրի բնության պահպանության կենտրոնի կողմից կազմակերպված Ռուսաստանի Դաշնությունում և նախկին ԽՍՀՄ-ի տարածքի այլ երկրներում էկոհամակարգերի և կենսաբազմազանության էկոնոմիկայի (այսուհետ՝ ԷԿՏՆ) ներդրման հնարավորություններին նվիրված խորհրդակցությանը :

2-րդ Քայլ. 2011 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվեց և ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 20-ի նիստի N 19 արձանագրային որոշմամբ հավանության արժանացավ բնապահպանական ծրագրերի մշակման և իրականացման հայեցակարգից բխող խնդիրների իրականացման միջոցառումների ծրագիրը, որի 13-րդ կետով նախատեսված էր «Բնապահպանության ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ներկայացումը:

3-րդ Քայլ. Բնապահպանական ծրագրերի մշակման և իրականացման հայեցակարգից բխող խնդիրների իրականացման միջոցառումների ծրագրի կատարման շրջանակներում 2012 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվեց և ՀՀ կառավարության 2013թ. ապրիլի 25-ի նիստի N 16 արձանագրային որոշմամբ հավանության արժանացավ բնապահպանության ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգը, որի հիմնական անկյունաքարը

հանդիսանում էր միջազգային փորձի հիման վրա էկոհամակարգային ծառայությունների գաղափարախոսության ներկայացումը, այդ թվում՝

- էկոհամակարգային ծառայությունների դասակարգման տարբեր մոտեցումներ-սահմանումներ,
- էկոհամակարգային ծառայությունների վճարներ,
- էկոհամակարգային ծառայությունների գնային արժեքի սահմանում,
- էկոհամակարգերի պահպանության շահավետության օրինակներ,
- էկոհամակարգային ծառայությունների ոլորտում առկա խնդիրներ և լուծման այգորիթմներ:

Եվ ամենակարևոր արդյունքը, հայեցակարգում ամրագրվեց հետևյալը՝

էկոհամակարգային ծառայությունների զգալի մասը ներկայումս չի ստացել ադեկվատ տնտեսական գնահատական: Կարևորագույն նպաստող գործառույթները, որոնք անհրաժեշտ են մյուս գործառույթների և ծառայությունների գործարկման համար (ֆոտոսինթեզ, հողագոյացում և այլն) ներկայումս իրական տնտեսությունից շատ ավելի հեռու են գտնվում, քան, օրինակ, ռեսուրսաապահովող, կարգավորող և մշակութային ծառայությունները:

Կենսաբազմազանության և էկոհամակարգերի թերագնահատումը կապված է հետևյալ խնդիրների հետ.

ա. իրազեկվածության խնդիր. Շատ հաճախ էկոհամակարգային ծառայությունները նույնացվում են բացառապես էկոհամակարգերի ռեսուրսային գործառույթի հետ,

բ. էկոհամակարգային ծառայությունները, որպես կանոն, ներառված չեն շուկայական հարաբերություններում,

գ. դրանց արժեքը շատ հաճախ հաշվի չի առնվում տնտեսական գնահատումների և որոշումների ընդունման ժամանակ,

դ. բնական գործոնը չի արտացոլվում ոչ ազգային տնտեսության, և ոչ էլ առաջատար մակրոտնտեսական ցուցանիշներում:

Արդյունքում ունենում ենք՝

- ոչ ճիշտ որոշումների ընդունում՝ որոշումների ընդունման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ոչ լիարժեքության պատճառով,
- քաղաքական թույլ կամք և համոզմունքներ, որոնք խոչընդոտում են համապատասխան գործընթացների ծավալմանը,
- կենսաբազմազանության կորստի հետագա շարունակում և բնական կապիտալի ոչնչացում:

Այս պայմաններում պատահական չէ, որ 2010 թվականի հոկտեմբերին Ճապոնիայի Նագոյա քաղաքում կայացած գազաթնաժողովի ժամանակ 2011-2020 թվականների համար ընդունված Կենսաբազմազանության ռազմավարական ծրագրում շեշտադրվում է «կենսաբազմազանության արժեքավորման» գիտակցման անհրաժեշտությունը:

ԷԿՏՆ -ի զեկույցներում ևս ընդգծվում է, որ բոլոր երկրներում էլ որոշում ընդունող անձանց առջև ծառայած են հետևյալ երկու կարևորագույն խնդիրները.

1. Սովորել գնահատել բնական կապիտալի արժեքը և ներառել համապատասխան գնահատականները որոշումների ընդունման գործընթացում:
2. Մշակել կառավարման արդյունավետ և արդարացի մոտեցում:

4-րդ Քայլ. 2013 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվեց և ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 14-ի նիստի N 47 արձանագրային որոշմամբ հավանության արժանացավ բնապահպանության ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգից բխող խնդիրների իրականացման միջոցառումների ծրագիրը, որի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված է՝

3. «Էկոհամակարգային ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ՀՀ կառավարություն ներկայացում

4. «Բնական կապիտալի և Էկոհամակարգային ծառայությունների տնտեսական (արժեքային) գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ՀՀ կառավարություն ներկայացում

5-րդ Քայլ. «Էկոհամակարգային ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակման առաջին փուլում ուսումնասիրվեց Էկոհամակարգային ծառայությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը և առկա հիմնախնդիրները:

ՀՀ գործող օրենսդրությունում «Էկոհամակարգային ծառայություններ» հասկացությունը չի օգտագործում, սակայն դրանց առանձին տեսակների նկրագիրը և այլ մանրամասները ներկայացված են կենսաբազմազանության պահպանության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվող օրենքներում և այլ իրավական ակտերում:

ՀՀ գործող իրավական ակտերում բացակայում է կենսաբազմազանության պահպանության արդյունքում կամ բանական օգտագործման արդյունքում տրամադրվող կամ ստացվող Էկոհամակարգային ծառայությունների (այսուհետ՝ ԷԾ) ուղղակի և անուղղակի օգուտներին վերաբերող դրույթներ: Սակայն նշված են դրույթներ, որոնք նկարագրում են խնդրո առարկա ծառայությունների որոշ տեսակները կամ դրանց բաղադրիչները:

6-րդ Քայլ. Բնապահպանության ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգից բխող խնդիրների իրականացման միջոցառումների ծրագրի կատարման շրջանակներում 2015 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվեց «Էկոհամակարգային ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որի գլխավոր նպատակն էր Էկոհամակարգային կառավարման մոտեցման ներդրման, Էկոհամակարգերի պահպանության և արդյունավետ կառավարման

ապահովումը, իսկ առարկան՝ էկոհամակարգային ծառայությունների, դրանց մատուցման (տրամադրման) հետ կապված հարաբերությունների կարգավորումը:

Որոշում կայացնողների, միջին և բարձր մակարդակի կառավարության ներկայացուցիչների հետ քննարկումների ժամանակ վեր են հանվել էկոհամակարգային ծառայությունների հասկացության ըմբռնման պակասին, ինչպես նաև քննարկվող հարաբերությունների իրավակարգավորման տարբեր կամ անհասկանալի մոտեցումներին առնչվող հարցեր, ներառյալ՝

- Իրավակարգավորմանն առնչվող հարցեր
- Մշակութային էկոհամակարգային ծառայություններ:
- Հարկային բեռի ավելացում և այլ հարցեր:

Հաշվի առնելով վերը նշված տարաձայնությունները, ինչպես նաև հաշվի առնելով, որ.

ա) Օրենքի ընդունումը Հայաստանի համար դեռևս ժամանակավրեպ է, էկոհամակարգային ծառայությունների և դրանց դիմաց վճարումների ներդրման գաղափարախոսությունը դեռևս լրացուցիչ պարզաբանման և լուսաբանման, հայեցակարգային մոտեցումների ճշգրտման կարիք ունի՝ միջազգային փորձի ավելի խորը և Հայաստանում առկա էկոհամակարգային ծառայությունների դիմաց վճարումների տեղական փորձի առանձնահատկությունների ուսումնասիրման արդյունքների հիման վրա,

բ) մյուս կողմից, էկոհամակարգային ծառայությունների համակարգի ներդրումը Հայաստանի տնտեսության զարգացման ներկայիս մակարդակի պայմաններում կարող է լրացուցիչ ֆինանսական բեռ առաջացնել էկոհամակարգերից օգտվողների մոտ,

նպատակահարմար գտնվեց օրենքի փոխարեն մշակել 2017 թվականին էկոհամակարգային ծառայությունների համակարգի ներդրման հայեցակարգ, որի շրջանակներում լուծել առկա խնդիրները և փուլ առ փուլ առաջ շարժվել:

7-րդ Քայլ. Սկսած 2011թվականից ՀՀ կառավարության կողմից հավանության են արժանացել մի շարք ռազմավարական ծրագրեր, որոնցով նախատեսված են էկոհամակարգային ծառայությունների և դրանց դիմաց վճարումների ներդրման գաղափարախոսությանն առնչվող միջոցառումներ, այդ թվում՝

- Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարություն / 10 դեկտեմբերի 2015 թվականի N 54 արձանագրային որոշում /
- Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը /25 սեպտեմբերի 2014 թվականի N 1059-Ս որոշում/
- Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագիր / 27 մայիսի 2015 թվականի N 23 արձանագրային որոշում/

Հասկանալի, որ վերը նշված միջոցառումների իրականացումն էականորեն կնպաստի էկոհամակարգային ծառայությունների և դրանց դիմաց վճարումների գաղափարախոսության ներդրմանը, սակայն ամբողջովին չեն լուծի առկա հիմնախնդիրները:

Առկա հիմնախնդիրների լուծմանը որոշ մասով կօգնի շրջանառության մեջ գտնվող «Էկոքաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը, որով նախատեսվում է նաև խնդրո առարկա գաղափարախոսության ներդրման հիմնական կամ ընդհանրական իրավակարգավորումները:

3. Միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրեր

3.1 ՄԱԲԾ/ՄԱԶԾ «Էկոհամակարգային ծառայությունների տնտեսական գնահատումը Հայաստանում»

Ընդհանուր նպատակ

Ծրագրի ընդհանուր նպատակը որոշում կայացնողներին ու շահագրգիռ կողմերին անհրաժեշտ գործիքների տրամադրման միջոցով ԷԾ մոտեցման ընդգրկումն է աղքատության կրճատումը և շրջակա միջավայրի կայունությունը իրար կապող որոշումների կայացման գործընթացներում և պլաններում: Այն ուղղված է աղքատության կրճատման և աղքատ ու խոցելի խմբերի բարեկեցության մակարդակի բարձրացման միջոցով զարգացման ազգային գործընթացներում շրջակա միջավայրի ներառմանը:

Ծրագիրը հիմնված է Հազարամյակի էկոհամակարգերի գնահատման մոտեցման վրա, որն ընդլայնվում է՝ ներառելով ոչ միայն զարգացման ազդեցությունը էկոհամակարգերի վրա, այլ նաև՝ զարգացման կախվածությունը էկոհամակարգերից: Ծրագիրն իրականացվել է 2011-2013թթ.:

Այն ֆինանսավորվել է Միավորված ազգերի կազմակերպության շրջակա միջավայրի ծրագրի (ՄԱԲԾ) և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) գլոբալ աղքատության և բնապահպանության համատեղ նախաձեռնության (ԱԲՆ/PEI) հովանու ներքո:

Կոնկրետ նպատակներ

- Պրակտիկ նյութերի ժողովածուի մշակում և համապատասխան շահագրգիռ կողմերի ու Հայաստանում նմանատիպ հետազոտական գործունեությամբ զբաղվող գործընկեր հաստատությունների միջև հաղորդակցության հարթակի ստեղծում՝ քաղաքականություն մշակողներին հետազոտության արդյունքների ու շրջակա միջավայրի տնտեսական տեղեկատվության փոխանցման ոլորտում համագործակցության ու սիներգիաների խթանման նպատակով:

- Կայուն Ա-Բ ազգային, տարածաշրջանային և տեղական ռազմավարական պլանավորման, մոնիտորինգի և բյուջետավորման գործընթացներում ներգրավման համար գործիքների և ուղեցույցային նյութերի մշակում, այդ թվում ցուցանիշների նախագծում և օգտագործում:

- Հիմնական շահագրգիռ կողմերի համար կարողությունների զարգացման ծրագրի մշակում՝ հիմնվելով ոլորտային զարգացման ծրագրերում և աղքատության կրճատման ռազմավարություններում էկոհամակարգային ծառայությունների ընդգրկման փորձնական ուսումնասիրության արդյունքների վրա:

Հիմնական գործողություններ

1. Կարողությունների զարգացում և ուսուցում

- Փորձագիտական խմբի հիմնում և ԷԾ հասկացությունների վերաբերյալ փորձագիտական խմբի կարողությունների զարգացում,
- ԷԾ գնահատման մեթոդոլոգիաներ,
- Էկոհամակարգերի փոփոխության ուղղակի և անուղղակի դրդապատճառների բացահայտում,
- ԷԾ ռիսկերի և հնարավորությունների բացահայտում,
- Քաղաքականության այն տարբերակների բացահայտում, որոնք առավել արդյունավետորեն կարող են պահպանել էկոհամակարգային ծառայությունների կարողությունները՝ բավարարելով աղքատների կարիքները և դրանով իսկ ամրապնդելով Հայաստանի կայուն զարգացման ռազմավարությունը, և
- Մանրամասն տնտեսական գնահատում իրականացնելու նպատակով փորձագիտական խմբի կարողությունների հզորացում ԷԾ մոնիտորինգի և հետադարձ կապի մեխանիզմների ստեղծման միջոցով՝ մասնավորապես շեշտը դնելով գնահատման մեթոդաբանությունների վրա:

2. Տնտեսական գնահատման դեպքի ուսումնասիրություն

- Փորձագիտական խմբի կողմից Հայաստանի հյուսիսում ընտրված Քարաբերդի տարածքում դեպքի ուսումնասիրության իրականացում՝ բազմակողմանի խորհրդակցական գործընթացների միջոցով, և միջազգային խորհրդատուի և ՄԱԲԾ / ՄԱԶԾ ԱԲՆ տարածաշրջանային թիմի հետ համագործակցության և տեխնիկական աջակցության պայմաններում
 - Տարբեր փուլերում շահագրգիռ կողմերի համար սեմինարների կազմակերպում
 - Քաղաքականություն/ ռազմավարություն/ ծրագրի մշակողներին ապահովող և կարգավորող ծառայությունների և դրանց պահպանման/պաշտպանության/բարելավման կարևորության ներկայացում:
- Պահպանվող տարածքի շրջակայքում հանքարդյունաբերական ոլորտի ուսումնասիրության թիրախավորում:

Քաղված դասեր

- Ծախսերի և օգուտների համակարգված վերլուծության և այլընտրանքային սցենարների զարգացման տարբերակների բացակայությունը բոլոր մակարդակներում ենթակառուցվածքային նախագծերի, բիզնես մոդելների ու զարգացման պլանների մշակման ընթացքում լուրջ մարտահրավեր են հանդիսանում:
- Պիլոտային ծրագրերի արդյունքները պետք է կապվեն ենթաազգային և ազգային մակարդակներում համապատասխան ռազմավարությունների հետ և ունենան վերարտադրության ներուժ:
- Մինչդեռ ԷԾ գնահատման մեթոդը հատուկ նախագծված չէ աղբատության խնդրի լուծման համար, որպես հետևանք այն հանգամանքին, որ հայկական գյուղական աղբատներից շատերն ապրում են արժեքավոր էկոհամակարգերի ներսում կամ շուրջ այն կարող է դրական ազդեցություն ունենալ այդ համայնքներում աղբատության կրճատման վրա:

Արդյունքներ

1. Հանքարդյունաբերության ոլորտում նոր մոտեցումների և մեթոդաբանության ներդրմամբ իրականացված փորձնական ուսումնասիրություն, որի շրջանակներում գնահատվել է մարդկային զարգացման և աղքատության վրա տնտեսական ակտիվության և դրա հետ կապված շրջակա միջավայրի դեգրադացիայի ազդեցությունը, ինչպես նաև զարգացման տարբեր այլընտրանքների (օրինակ, հանքարդյունաբերությունն ինքնին կամ որպես բիզնես գործունեություն, կայուն հանքարդյունաբերության, և հանքարդյունահանման բացակայության տարբերակ - մեր դեպքում գյուղատնտեսությունն ընդդեմ հանքարդյունաբերության) լրամշակման և համեմատության նպատակով ոլորտային պլանավորողներն ապահովվել են անհրաժեշտ մեթոդաբանությամբ և մոտեցմամբ: Պիլոտային գնահատման նպատակով ընտրվել է Քարաբերդի ոսկու հանքի տեղամասը, որը գտնվում է Հայաստանի հյուսիսում (Լոռու մարզ): ԷԾԳ կիրառումը նորարարական մոտեցում է և պահանջում է համապարփակ պատկերացում այն մասին, թե մարդու գործունեության արդյունքում էկոհամակարգային ծառայությունները և հարակից օգուտներն ինչպիսի փոփոխությունների կենթարկվեն: Ընտրված տարածքում, այնքանով, որքանով հնարավոր է տեղամասի գնահատման ու էկոհամակարգային ծառայությունների դրամայնացման համար համապարփակ սոցիալ-տնտեսական և բնապահպանական վերլուծության իրականացման նպատակով փորձարկվել են մի քանի գործիքներ: Սա կարող է օգնել գործնականում ավելի լավ ընկալել գնահատման շրջանակներում բնապահպանական ու սոցիալական մտահոգությունների ինտեգրման հնարավորություններին և մարտահրավերներին առնչվող առանցքային հարցերը:
2. Համապատասխան ազգային իշխանությունների, հասարակական կազմակերպությունների ու տեղական համայնքների շրջանում

տեղեկացվածության բարձր մակարդակ և որպես ամբողջություն էկոհամակարգային ծառայությունների, բնական կապիտալի, տնտեսական ու մարդկային զարգացման միջև կապերի ավելի լավ ըմբռնում: Ազգային կառավարության (հիմնական առաջատար նախարարություններ ինչպիսիք են՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարությունը և այլն), գիտական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների (Հայաստանի ամերիկյան համալսարան, Պետական ճարտարագիտական համալսարան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն, Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոն, Հանուն կայուն մարդկային զարգացման հասարակական կազմակերպություն, Հայկական բնապահպանական ցանց) և միջազգային կազմակերպությունների (Համաշխարհային բանկ, ԱՄՆ ՄԶԳ, ԵԱՀԿ, ԳՄՀՀ, ՎԲՀ, Կովկասի ՏԲԿ և այլն) ավելի քան 60 ներկայացուցիչներ մասնակցել են ընդհանուր առմամբ երկրում տնտեսական գործիքների ներդրման քաղաքական մոտեցումների և պիլոտային ուսումնասիրության արդյունքների վրա հիմնված շրջակա միջավայրի վրա իրական ազդեցության ավելի լավ ըմբռնման ու փորձի փոխանակման հարթակի ստեղծման նպատակով կազմակերպված խորհրդակցությունների և սեմինարների:

3. Այս գործընթացի նկատմամբ քաղաքական աջակցությունն ապահովվել է կառավարության առանցքային գործընկերների, մասնավորապես՝ ՀՀ բնապահպանության և ՀՀ էներգետիկայի ու բնական պաշարների նախարարությունների հետ ծավալուն խորհրդակցությունների միջոցով: Լայն շրջանակներում առավել ճանաչվածության արդյունքում էկոհամակարգային ծառայությունների հասկացությունը ներառվել է շրջակա միջավայրի պահպանության նոր շրջանակային օրենքի նախագծի

ուրվագծում: Լրացուցիչ աջակցություն է ստացել նաև Էկոհամակարգային ծառայություններին նվիրված առանձին գլխի մշակումը: Հարկ է նշել, որ անկախությունից ի վեր (1992թ.) սա առաջին դեպքն է, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ օգտագործվել են «Էկոհամակարգային ծառայություններ» և «Էկոհամակարգային ծառայությունների գնահատում» տերմինները:

4. Ծրագրի գործողությունների իրականացմանը զուգընթաց ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվել և կառավարության կողմից 2013թ. ապրիլին հավանության է արժանացել նոր «Բնապահպանական ոլորտի նորարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգը», որում Էկոհամակարգային ծառայություններին նվիրված է առանձին գլուխ: Այս, Հայեցակարգի հիման վրա մշակվել է և Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշմամբ հաստատվել է Բնապահպանական ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգից բխող խնդիրների իրականացման միջոցառումների ծրագիրը⁶:
5. Դրական արդյունք է ստացվել նաև տեղական գիտելիքների ու կարողությունների մակարդակի բարձրացման արդյունքում՝ ԷԾ գնահատման մեթոդաբանության դիտարկման և փորձի կուտակման միջոցով: Բնապահպանական տնտեսագիտության և ՇՄԱԳ ոլորտում մասնագիտացող շուրջ 30 մագիստրոսներ, ասպիրանտներ ու փորձագետներ ծանոթացել են հանքարդյունաբերական պիլոտային դեպքի գնահատման արդյունքներին և անցել են ԷԾ և այլ արդյունաբերական գործունեության (հիդրոէներգետիկա և այլն) արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցության պատշաճ գնահատման մեթոդաբանական մոտեցումների և քայլերի վերաբերյալ ուսուցում:

⁶ՀՀ կառավարության # 47 արձանագրային որոշում (14 նոյեմբերի 2013 թվականի)

3.2 ԿՏԲԿ: «Աջակցություն Հարավային Կովկասի լեռնային շրջաններում կենսաբազմազանության պահպանման քաղաքականության և պրակտիկայի զարգացմանը»

Ընդհանուր նպատակ

Կովկասյան Էկոտարածաշրջանի յուրօրինակ բազմազանությունը և էնդեմիզմը կոնկրետ Էվոյուցիոն գործընթացների և ֆլորայի ու ֆաունայի ինքնատիպ պատմական զարգացման հետ միասին մեծ նշանակություն ունեն շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պահպանության առումով և նպատակաուղղված են անկանոն հատումների, գերարածեցման, որսագողության, ենթակառուցվածքների զարգացման և աղտոտման հետևանքով կենսաբազմազանության կորստի կասեցմանը: Այս համատեքստում անհապաղ գործողությունների և Էկոտարածաշրջանի վրա հիմնված երկարաժամկետ պահպանման ռազմավարությունները կարող են երաշխավորել Կովկասյան Էկոտարածաշրջանի անտառային և բարձր լեռնային Էկոհամակարգերի պաշտպանությունը:

Վերոնշյալ նպատակի իրականացման նպատակով Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը նախաձեռնել է «Աջակցություն Հարավային Կովկասի լեռնային շրջաններում կենսաբազմազանության պահպանման քաղաքականության և պրակտիկայի զարգացմանը» խորագրով ծրագիրը: Ծրագիրը մեկնարկել է 2011 թ. դեկտեմբերին և ավարտվել է 2014 թ.-ին: Ծրագրի նպատակը տեղական համայնքների և իշխանությունների կարողությունների զարգացումն էր, որպեսզի Կովկասի Էկոտարածաշրջանի լեռնային տարածքների անտառային Էկոհամակարգերի կենսաբազմազանության կորուստի խնդիրը հնարավոր լինի լուծել կենսաբազմազանության մասնակցային կառավարման կատարելագործման միջոցով:

Ծրագիրը ֆինանսավորվել է Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության կողմից և կենտրոնացած է եղել Հարավային Կովկասի երեք լեռնային շրջանների վրա, այդ թվում, Վրաստանի Ռաչա, Ադրբեջանի Ենիյոլ և Շեհրիյար և Հայաստանի Կողբ և Ջուջևան տարածաշրջաններ:

Կոնկրետ նպատակներ և նախատեսվող գործողություններ

Ծրագրի կոնկրետ նպատակներն են.

1. Բարձրացնել տեղական համայնքների, լեռնային շրջանների տեղական իշխանությունների և ազգային մակարդակում որոշում կայացնողների իրազեկվածության և գիտելիքների մակարդակը անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության արժեքների, դրանց կայուն օգտագործման և պահպանման օգտակարության մասին, ինչպես նաև մեծացնել կենսաբազմազանության պահպանության պատրաստակամությունը:
2. Տեղական մակարդակում կենսաբազմազանության կառավարման պլանավորման գործընթացներում ներդնել մասնակցային կառավարման մեթոդը:
3. Դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնման և դրանց նշանակության բարձրացման պիլոտային ծրագրերի իրականացման միջոցով ցույց տալ դրանց գործնական կիրառումը:

Վերոնշյալ նպատակների բավարարման նպատակով իրականացվել են հետևյալ գործողությունները.

Նպատակ 1-ին. էկոհամակարգային ծառայությունների և կենսաբազմազանության արժեքների տնտեսական գնահատում; իրազեկման բարձրացմանն ուղղված գործողությունների իրականացում, այդ թվում՝ սոցիալական միջոցառումներ, մեդիա-տուրեր, հրապարակումներ; գիտելիքների ու փորձի փոխանակման նպատակով տարածաշրջանային կոնֆերանսի/ հանդիպումների կազմակերպում:

Նպատակ 2-րդ: անտառային ռեսուրսների օգտագործման գնահատման իրականացում; անտառային էկոհամակարգերի GIS տվյալների բազայի/քարտեզներ մշակում, կենսաբազմազանության պահպանության, կայուն օգտագործման և համայնքային անտառների կառավարման հետ կապված հարցերի արտացոլման լույսի ներքո տարածաշրջանային/տեղական քաղաքականության, ռազմավարությունների և ծրագրերի բացթողումների վերլուծություն և երեք ֆոկուս լեռնային շրջաններում ընտրված թիրախային համայնքների շրջակա տարածքներում քաղաքականության/նորմատիվ փաստաթղթերի մեջ կենսաբազմազանության և համայնքային անտառկառավարման հարցերի ներառման նպատակով առաջարկությունների ներկայացում; տեղական զարգացման քաղաքականության մեջ կենսաբազմազանության պահպանության, կայուն օգտագործման և համայնքային անտառկառավարման հարցերի ընդգրկման նպատակով տեղական մակարդակով կարողությունների գնահատում և համապատասխան կարողությունների զարգացման նպատակով առաջարկությունների մշակում; էկոհամակարգային ծառայությունների արժեքի, կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման պլանավորման թեմաներով որոշում կայացնողների և տեղական բնակչության համար դասընթացներ; համայնքների գործնական կարիքներին ուղղված դասընթացներ և կենսաբազմազանության պահպանության ու կայուն օգտագործման նպատակով պլանների մշակում; թիրախային համայնքներում մասնակցային մոտեցման վրա հիմնված համայնքային անտառկառավարման պլանների մշակում:

Նպատակ 3: Դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնման և դրանց արժեվորման նպատակով ցուցադրական ծրագրերի նախագծում և իրականացում:

Իրականացրած գործողություններ

Մշակվել և ազգային ու տարածաշրջանային հանդիպումների ընթացքում ներկայացվել է էկոհամակարգային ծառայությունների (անտառային) տնտեսական գնահատման մեթոդաբանական մոտեցումներ ընդգրկող ԷԿՏԼ Հարավային Կովկասի ուսումնասիրությունը:

Հայաստանի պիլոտային համայնքների համար (Կողբ-Ջուջևան) մշակվել են անտառային ռեսուրսների օգտագործման թեմատիկ ուսումնասիրությունների հաշվետվություններ, ինչպես նաև անտառային էկոհամակարգային ծառայությունների տնտեսական գնահատման, անտառների կայուն օգտագործման և համայնքային անտառկառավարման վերաբերյալ առաջարկություններ:

Տեղական համայնքների կարողությունների զարգացման նպատակով իրականացվել է տեղական բնակչության, անտառապահների և տեղական ինքնակառավարման մարմինների ուսուցում՝ ուղղված կենսաբազմազանության արժեքների ճանաչմանը, կենսաբազմազանության պահպանության մասնակցային պլանավորմանը, անտառների կայուն օգտագործմանն ու համայնքային անտառների կառավարմանն ու պլանավորմանը:

Ավելի քան 400 գյուղացիներ մասնակցել են անտառային ծառատունկի աշխատանքների, ովքեր զինված են եղել անտառատնկման և անտառների կայուն օգտագործման վերաբերյալ գործնական հմտություններով և գիտելիքներով:

Ծրագրի աշխատանքային պլանը և 2011-2012 թթ. կտրվածքով առաջիկա գործողությունները մշակվել են 2011թ. դեկտեմբերին: Կազմվել են ազգային թմի ղեկավարների համապատասխան տեխնիկական առաջադրանքները:

2011թ. դեկտեմբերին կազմակերպված փորձագետների տարածաշրջանային հանդիպման նպատակը ծրագրի նպատակների, խնդիրների և պլանավորված գործողությունների ներկայացումը, ընդհանուր մեթոդական մոտեցումների մշակումը, ազգային և տարածաշրջանային կարիքներին ծրագրային գործողությունների համապատասխանության, ինչպես նաև, իրականացման

ձևերի ու 2012 թ. աշխատանքային պլանի համար գործողությունների քննարկումն էր:

Նշված հանդիպման շրջանակներում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները.

- Հստակ սահմանել գործողությունների ամսաթվերն ու ժամկետները
- ԷԿՏՆ մասնագետների համար հատուկ դասընթացների կազմակերպում
- Ոլորտում գործունեություն ծավալող համապատասխան հաստատությունների առաջարկությունների դիտարկում
- Ազգային առաջնահերթությունների կարևորում: ԷԿՏՆ նոր է էկոտարածաշրջանում և մեթոդաբանությունը պետք է ճշգրտվի և հարմարեցվի տեղական կարիքներին
- Տարածաշրջանային զարգացման պլաններում մշակված կենսաբազմազանության պահպանության ծրագրերի ընդգրկում
- Որոշումների կայացման վրա ազդելու հնարավորություն և գործնական ծրագրերի մշակում
- ԷԿՏՆ գնահատման համար միջազգային փորձագետի ընտրության հարցում:

Բոլոր երեք մասնակից երկրներում կազմավորվել են ղեկավար հանձնաժողովներ՝ համապատասխան նախարարությունների և գործակալությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների պաշտոնական ներգրավմամբ: Գումարվել են նիստեր և ստացվել են արձագանքներ:

Արդյունքներ

1. Էկոհամակարգերի և կենսաբազմազանության տնտեսական նշանակության մասին գիտելիքների փոխանցում:

2. Կենսաբազմազանության պահպանման կարևորության մասին հասարակական իրազեկվածություն, որը քաջալերում է տեղի բնակչությանը կայուն կերպով օգտագործել կենսառեսուրսները:
3. Հզորացված տեղական կարողություններ՝ ճանաչելով կենսաբազմազանության և էկոհամակարգերի ծառայությունների կարևորությունը:
4. կենսաբազմազանության մասնակցային կառավարման հզորացում. այնքան, որ շահառուները կարող են ինքնուրույն կառավարել գործընթացը:

3.3 ՄԱԿ ԵՏՀ: «Էկոհամակարգային ծառայությունների վճարների սխեմաների ներդրում հայաստանի վերին Հրազդանի պիլոտային գետավազանում»

Ընդհանուր նպատակ

ՄԱԿ-ի ԵՏՀ բաղադրիչ հանդիսացող Եվրոպական միության ջրային նախաձեռնության (ԵՄՁՆ) և Հայաստանում ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման (ՋՌՀԿ) ազգային քաղաքականության երկխոսության շրջանակներում 2011 թ. Հայաստանում իրականացվել է պիլոտային ծրագիր, որի նպատակը Հայաստանի գետավազաններում էկոհամակարգային ծառայությունների համար վճարների համակարգի ներդրումն ու կիրառումն է:

Այս նպատակով ընտրվել է պիլոտային տարածք, որը ներառում է Հրազդան գետի վերին հոսանքը՝ մինչև Քաղսի բնակավայր՝ աջակողմյան Մարմարիկ և Ծաղկաձոր վտակներ հետ միասին: Էկոհամակարգային ծառայությունների վճարների սխեման առաջարկվել է դրա ներդրման հետագա քայլերի հետ միասին:

Իրավական հիմքեր և մեթոդաբանություն

Ուսումնասիրության շրջանակներում առաջարկվել են ԷԾՎ սխեմաներ, որոնք պետք է կիրառվեն հիմնվելով ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» որոշման վրա: Հաշվարկվել է ամառային և ձմեռային ամիսների ընթացքում կեղտաջրերի արտանետման դեպքում Ծաղկաձոր գետին ԹԿՊ բարձր մակարդակի հետևանքով հասցվող տնտեսական վնասը: «Ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկայի մասին» ՀՀ բնապահպանության նախարարի հրամանի համաձայն, Ծաղկաձոր գետում ԹԿՊ5-ի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան համարժեք է 7.24մգ/լ :

Այսպիսով, առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները գերազանցող ցանկացած արտահոսքի դեպքում առաջարկվում է կիրառել հատուկ առավել բարձր դրույքաչափ: ԷԾՎ դրույքաչափերի ներդրման նպատակով կիրառվել է աղտոտողը վճարում է սկզբունքը, որն ամրագրված է ՀՀ ջրային օրենսգրքում, որը նախատեսում է նաև այն սկզբունքը, որ աղտոտողը պարտավորվում է ծածկել աղտոտման կանխարգելման և վերացման միջոցառումների ապահովման ֆինանսական ծախսեր:

Շրջակա միջավայրի աղտոտման արդյունքում տնտեսությանը հասցված վնասի հաշվարկման մեթոդաբանությունը ընդունվել է 1986 թ.-ին Հայկական ԽՍՀ ֆինանսների նախարարի և շրջակա միջավայրի պահպանության պետական կոմիտեի նախագահի կողմից, և հիմնված է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» որոշման վրա:

Ձմեռ-ամառ ամիսներին Ծաղկաձոր գետի հասցված տնտեսական վնասի ԹԿՊ-ով՝ համազարկային արտահոսքի դեպքում (ոչ պաշտոնական օգտագործման համար)

Կեղտաջրի ծավալը՝

$$Q=0.030 \text{ մ}^3/\text{վրկ} \times 86.400 \text{ վրկ} \times 182 \text{ օր} = 471.6 \text{ հազ. մ}^3$$

Կեղտաջրում ԹԿՊ-ի կոնցենտրացիան – 240 գ/մ³

Գետ թափվող ԹԿՊ-ի զանգվածը՝ T

$$T = 471600 \times 240 = 113.2 \text{ տոննա}$$

Ըստ մեթոդաբանության՝ 113.2 տոննա ԹԿՊ-ի արտահոսքի դեպքում, ջրային ռեսուրսին հասցվում է 27.8 հազ. դոլլարի տնտեսական վնաս:

Արդյունքներ

Ուսումնասիրության շրջանակներում առաջարկել է ընդունել նաև «Էկոհամակարգերային ծառայությունների վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որում կսահմանվի օրենքի կարգավորման առարկան, հիմնական հասկացությունները, այդ թվում՝ ԷԾՎ հասկացությունները, տեսակները, դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը, ԷԾ փաստացի ծավալների հաշվարկման մեթոդները: Ներկայացվել է նաև, թե Հայաստանի Հանրապետության այլ օրենքների ինչպիսի համապատասխան փոփոխություններ կպահանջվեն «Էկոհամակարգերային ծառայությունների վճարների մասին» օրենքի ընդունմանը զուգընթաց:

3.4 «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք (ԵՀԳԳ) Արևելյան երկրներում. անտառային օրենսդրության կիրառման և կառավարման բարելավման ծրագիր 2 (ENPI FLEG 2)»

Ընդհանուր նպատակ

Եվրամիության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք (ԵՀԳԳ) Արևելյան երկրներում. անտառային օրենսդրության կիրառման և կառավարման բարելավման ծրագիր 2 (ENPI FLEG 2)»-ը (Ծրագիր) նպատակ ունի աջակցելու մասնակից երկրներին բարելավել անտառների կառավարումը՝ իրենց անտառային քաղաքականության, օրենսդրության և ինստիտուցիոնալ կառուցվածքների արդյունավետության բարձրացման, ինչպես նաև պիլոտային մակարդակով անտառների կայուն կառավարման մոդելների իրականացման միջոցով:

Ծրագիրն իրականացվել է 4 տարիների ընթացքում և ավարտվել է 2016թ. դեկտեմբերի 31-ին: Ծրագրին աջակցում էր Եվրոպական հանձնաժողովը, իրականացումը ղեկավարվում էր WB-ի կողմից՝ համագործակցելով Բնության պահպանության միջազգային միության (IUCN) և Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հետ:

Կախված վերոնշյալ նպատակներից, ծրագիրը Հայաստանում առնչվում է բազմաթիվ հարցերին: Մասնավորապես, այն ուղղված է օրենսդրական և ինստիտուցիոնալ վերանայման և բարեփոխումների աջակցման աշխատանքներին, մարդկային ռեսուրսների կարողությունների ստեղծմանը՝ ուղղված FLEG հարցերին, անտառների վերաբերյալ հասարակական իրազեկմանը և մոնիթորինգին, անտառների կայուն կառավարման բարելավմանը՝ աշխատելով անտառային միավորների, օրինակ՝ անտառային պահպանվող տարածքների հետ և անտառային ռեսուրսների կայուն օգտագործմանը ուղղված միջոցառումները՝ հարակից համայնքների ներգրավմամբ, ինչպես նաև FLEG պլանավորման և

մոնիթորինգի բարելավման միջոցով՝ ազգային, տարածաշրջանային (տեղական) և միջազգային մակարդակներում:

Կունկրետ նպատակներ

Ծրագրի զարգացման երեք նպատակներն են.

1. Աջակցել մասնակից երկրներին 2005թ-ի Սանկտ Պետերբուրգի FLEG նախարարական հռչակագրի իրականացման գործում և ապահովել նախատեսված ժամկետներում գործողությունների ծրագրի, ինչպես նաև հետագա գործողությունների իրականացումը (տարածաշրջանային մակարդակով):
2. Դիտարկել կամ վերանայել (կամ ստեղծել դիտարկման կամ վերանայման գործողությունների ծրագիր՝ ըստ ժամկետայնության) անտառային ոլորտի քաղաքականությունը, օրենսդրական և վարչական կառույցները, աջակցել անտառների կայուն և արդյունավետ կառավարմանը (ներառյալ ԵՄ առնչվող կանոնակարգերի ազդեցությունը) մասնակից երկրներում (ազգային մակարդակով) և բարելավել դրան առնչվող գիտելիքները:
3. Փորձարկել և ներկայացնել անտառների կայուն կառավարման լավագույն փորձը և անտառների կառավարման բարելավման հնարավորությունը՝ փորձնական հիմունքներով, դաշտային պայմաններում, բոլոր մասնակից երկրներում (ենթա-ազգային մակարդակով):

Արդյունքներ

FLEG II ծրագրի շրջանակներում իրականացվել է Հայաստանի անտառային ոլորտի նախնական ուսումնասիրության, որի նպատակը թեմատիկ և քաղաքականությանն առնչվող այն հարցերի ընդգծումն է, որոնց կարող է պատասխանել անտառային ոլորտի ամբողջական ԷԿՏՆ ուսումնասիրությունը,

ինչպես նաև ապագայում ապահովելով ամբողջական ԷԿՏՆ ուսումնասիրության ճանապարհային քարտեզը:

Էկոհամակարգային ծառայությունների գնահատման հնարավորությունների նախնական ուսումնասիրության հետ մեկտեղ ուսումնասիրության շրջանակներում իրականացվել է անտառկառավարման գործող պրակտիկայի (ավանդական բիզնես) և էկոհամակարգի կայուն կառավարման (SEM) համեմատական վերլուծություն: Մշակվել են գործող անտառկառավարման համակարգում ԷԿԿ խթանման և ԷԾ տնտեսական համակարգի ձևավորման համապատասխան առաջարկներ: Վերլուծության արդյունքում մշակվել է ճանապարհային քարտեզ ապագայում օրենսդրության, քաղաքականության և կառավարման համակարգի վերանայման, ինչպես նաև ԷԾ տնտեսական գնահատման վերաբերյալ համապատասխան առաջարկներով:

Ավելի ուշ ծրագրի շրջանակներում իրականացվել է նախնական ուսումնասիրությունների վերլուծություն, որը կոնսոլիդացվել է մեկ տարածաշրջանային փաստաթղթում և իրականացվել է տարածաշրջանային սեմինար:

Այլ ուսումնասիրություններ

Հանքարդյունաբերության ոլորտում էկոհամակարգային ծառայությունների վերաբերյալ ուսումնասիրություններ իրականացվել են միայն Ամուլսար ոսկու հանքի ծրագրի շրջանակներում Լիդիան ընկերության կողմից, որի նպատակը մարդկանց կողմից էկոհամակարգերի օգտագործման ու կախվածության վերաբերյալ պատկերացման կազմումը և հանքարդյունահանման տեղամասի վրա ծրագրի ազդեցության գնահատումն է: Չնայած որ ուսումնասիրությունները խիստ ընդանրացված են, սակայն դրանք կարևոր օրինակ են ծառայում այլ մասնավոր կազմակերպությունների ընդօրինակման համար⁷.

⁷ Page 210 <http://www.geoteam.am/images/amulsar/SHMAG.pdf>

2012թ. փետրվարին Գեոթիմ ընկերության կողմից իրականացվել է Էկոհամակարգի գնահատում, որի նպատակը Գորայք, Սարավան, Գնդեվազ համայնքներում բնակչության կողմից խոտաբույսերի, հատապտուղների և այլ մշակաբույսերի օգտագործման վերաբերյալ ընկալման ձևավորումն էր: 2014թ. շահառուների հետ անցկացրած հարցազրույցները և նպատակային խմբի հետ հանդիպումները անց են կացվել տեղական գյուղերում (Գորայք, Սարավան, Գնդեվազ) կազմակերպված որպես սոցիալական ազդեցության գնահատման գործընթացի մաս: Հանդիպումներում մասնակցել են Խնձորեսկ գյուղի սեզոնային հովիվները և Ջերմուկ քաղաքի բնակիչները: Նպատակային խմբի յուրաքանչյուր հանդիպումը և հարցազրույցը անց է կացվել հայերեն և համընթաց թարգմանվել է անգլերեն:

2015թ. նույն նպատակային խմբերի հետ կրկին անցկացվել են հարցազրույցներ և նպատակային հանդիպումներ, որի նպատակը հողօգտագործման փոփոխությունների գնահատումն էր, որը կարող էր փոխել Էկոհամակարգերի հասանելիությունը, հատուկ մեղմացնող միջոցառումներ անհրաժեշտության չափը և դրանք ընդունելու մարդկանց պատրաստակամությունը:

Ծրագրի շինարարության, շահագործման կամ փակման արդյունքում Էական փոփոխությունների ենթակա Էկոհամակարգային ծառայությունների բացահայտման և պատկերման նպատակով Էկոհամակարգային կամ բնական բուսականության տեսակի մատակարարման ծառայությունները քարտեզագրված էին Ծրագրի գործողությունների և ենթակառուցվածքների տարածքների վրա: Էկոհամակարգերը կարող են ազդեցություն կրել, քանի որ դրանք գտնվում են Ծրագրի ֆիզիկական տարածման գոտու ներսում կամ որովհետև Ծրագիրն առաջ կբերի կենսաֆիզիկական կամ սոցիալական փոփոխություններ, որոնք կարող են փոխել վերջիններիս օգտագործումը կամ օգտագործման չափը, որից մարդիկ կարող են օգուտ քաղել:

4. Եզրակացություններ

Ներկայումս նկատելի է ազգային ծրագրերում և պլաններում ԷԾ և ԷԾՎ գաղափարախոսության ներառման որոշակի դրական և շոշափելի միտում՝ չնայած ՀՀ ԷԾ և ԷԾՎ ոլորտի օրենսդրական անկատարությանն ու բացթողումներին: ՀՀ կառավարությունն ու համապատասխան գործակալություններն աշխատում են ԷԾ և ԷԾՎ ավելի լավ ըմբռնման և կարևորման ուղղությամբ նաև կենսաբազմազանության ու էկոհամակարգային ծառայությունների պահպանության վերաբերյալ հանրության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացման միջոցով:

Ամփոփելով ներկայացված ուսումնասիրությունները կարելի է փաստել հետևյալը.

1. «Էկոհամակարգային ծառայությունների» հասկացությունը չի կիրառվում ՀՀ գործող օրենսդրության մեջ և այդ ծառայությունների հետ կապված հարցեր չեն կարգավորվում բավարար չափով:
2. Բնական ռեսուրսների կամ բնական կապիտալի օգտագործման տեսակները, կամ դրանց կողից կամ օգնությամբ տրամադրվող գործառույթները հատուկ դասակարգման չեն ենթարկվում կամ միայն մասամբ են համապատասխանում ներկայումս միջազգային պրակտիկայում օգտագործվող էկոհամակարգային ծառայությունների դասակարգման մեթոդաբանությանը կամ մեթոդներին: Էկոհամակարգային ծառայություններն անմիջականորեն չեն բխում գործող օրենքների կարգավորման առաջնային նպատակներից:
3. ՀՀ գործող օրենսդրությունը բավականաչափ կամ տեսանելիորեն չի արտացոլում բնական էկոհամակարգերի, բնական պաշարների կամ բնական կապիտալի օգտագործման արդյունքում կամ օգնությամբ տրամադրվող գործառույթների տնտեսական կամ ծախսերի գնահատման կարևորությունը:

4. Բնական պաշարների կամ բնական կապիտալի ընդհանուր տնտեսական գնահատման ԷԾ տնտեսական կամ արժեքային գնահատման մեթոդաբանությունը կամ մեթոդաբանական հիմքերը բավականաչափ կամ հստակ կերպով սահմանված չեն ՀՀ օրենսդրության կամ այլ իրավական ակտերում:

Ձեռք բերված փորձը և քաղված դասերը հետազայում հիքեր կստեղծեն ԷԾ և ԷԾՎ գաղափարախոսության ընդգրկման ու հաջողությամբ դրանց կիրառման համար:

- Էկոհամակարգային ծառայությունների գնահատման համար պահանջվող իրավական գործիքներում Էկոհամակարգային ծառայությունների հասկացության ընդգրկման համար համալիր ու համապարփակ օրենսդրական բարեփոխումների մշակման անհրաժեշտություն:
- իրավական բարեփոխումների համար ռազմավարության մշակում:
- Շրջակա միջավայրի պահպանության շրջանակային օրենքի մշակում, որում կներառվեն ԷԾ հիմնական կանոնները:
- ԷԾ ոլորտում տեղեկացվածության մակարդակի բարձրացումը առաջնահերթ է, սակայն դասընթացները և սեմինարները կարող են ավելի ազդեցիկ ու ինֆորմատիվ լինել, եթե զուգորդվեն Էկոհամակարգային ծառայությունների տրամադրման գործնական սխեմաների հետ, որը կհանգեցնի սահմանված ծառայությունների, մատակարարների, օգուտ ստացողների և շարժառիթների պայմաններում Էկոհամակարգային ծառայությունների տրամադրման վերաբերյալ պայմանագրերի ստորագրման, այդ թվում, ԷԾՎ սխեմաները կարող են տարբեր ձևաչափեր ունենալ, քանի որ մեկ ԷԾՎ շրջանակներում տարբեր շահագրգիռ կողմեր կարող են գործել որպես գնորդ, վաճառող կամ միջանորդ: Այսպիսով, կախված վճարման հոսքով մտահոգված կազմակերպության բնույթից կամ ներգրավված մարդկանցից ԷԾՎ ընդհանուր դասակարգման շրջանակներում առաջարկվում են երեք տարբեր սխեմաներ.

- **Հանրային-հանրային:** որոշ դեպքերում հանրային կազմակերպությունները ԷԾ մատակարարներ են հանդիսանում, մինչդեռ հանրային կառուցվածքը նաև հանդիսանում է ԷԾ գնորդ:
- **Հանրային-մասնավոր:** Սա հանդիսանում է ԷԾՎ ամենատարածված տեսակը, որի դեպքում կառավարությունը վճարում է սեփական բյուջեից
- **Առևտրային սխեմա (մասնավոր-մասնավոր):** այս տիպի սխեմայի դեպքում մասնավոր կառուցվածքը պատրաստակամություն է հայտնում ստեղծել ձեռնտու հարաբերություն որպեսզի բարելավվի իր գործողությունների արդյունավետությունը.

ԷԾՎ ներդրման հետ կապված խնդիրներ

Քանի որ շատ ԷԾ-ներ չեն վաճառվում շուկաներում, իսկ շուկաները չեն կարող տալ համապատասխան ազդանշաններ, որոնք կնպաստեն այդ ծառայությունների արդյունավետ բաշխմանն ու կայուն օգտագործմանը, հետևաբար ԷԾՎ կարող է ծառայել որպես ԷԾ պահպանմանն ուղղված արդյունավետ տնտեսական մեխանիզմ:

Չնայած նրան, որ առկա տնտեսական մեխանիզմներն ունեն իրենց թերությունները, ԷԾՎ չեն կարող փոխարինել այդ մեխանիզմները: Պետք է ձեռք բերել տարբեր տնտեսական մեխանիզմների օպտիմալ համադրություն, որը ենթադրում է, որ ԷԾՎ պետք է կարևոր դեր կատարի տնտեսական գնահատման մոտեցումների խմբում: Գործող բնապահպանական օրենսդրությունը կարող է ծառայել որպես հիմք ԷԾՎ ներդրման համար, սակայն բացի այդ ներառված է էկոհամակարգերի և դրանց ծառայությունների արժեքի վերաբերյալ ըմբռնումը զարգացնել:

Սխեմայի զարգացման մեջ գնորդների ու վաճառողների կոնֆիգուրացիան ևս կարող է տարբեր լինել: Օրինակ՝

- **Մեկը մեկի համար:** օրինակ, որի դեպքում ընկերությունը պայմանագրային

հարաբերությունների մեջ է մտնում մեկ խոշոր հողի սեփականատիրոջ հետ՝ ապահովելով մեծ ծավալներով ածխածնի կլանումը

- **Մեկը շատերի համար:** օրինակ, որի դեպքում ջրային տնտեսությունը մեկ առանցքային ջրհավաք ավազանում բրոքերի միջոցով վճարում է մի քանի ֆերմերների ջրօգտագործման նկատմամբ ջրա-զգայուն կառավարման պրակտիկայի իրականացման համար
- **Շատերը մեկի համար:** օրինակ, որի դեպքում քաղաքային կանաչ տարածքի զարգացման և պահպանման նպատակով մի քանի գնորդներ միասին ներդրում են կատարում, և
- **Շատերը շատերի համար:** օրինակ, որի դեպքում կառավարությունը վճարում է ֆերմերներին հողի կառավարման խնայող պրակտիկայի իրականացման համար:

Քաղված դասեր և ներգրավված մասնակիցներ

1. Առաջին հերթին պետք է արձանագրել բնապահպանական ՀԿ-ների և քաղաքացիական հասարականության մյուս ներկայացուցիչների պասիվ վերաբերմունքը «Էկոհամակարգային ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկմանը, որոնց կողմից որևէ առաջարկություն կամ դիտողություն չի ներկայացվել, աջակցություն չի ցուցաբերվել;

2. Ամփոփելով քաղված դասերը կարելի է արձանագրել, որ Հայաստանում էկոհամակարգային ծառայությունների գաղափարախոսության համար անհրաժեշտ է՝

- Էկոհամակարգային ծառայությունների համակարգի ներդրման հայեցակարգի մշակման շրջանակներում փորձել գտնել վերհանված իրավակարգավորման և այլ հիմնախնդիրների լուծման ուղիները,
- Ուսուցողական համապատասխան դասընթացների կազմակերպում պետծառայողների և որոշում ընդունողների համար,

- վերհանված իրավակարգավորման և այլ հիմնախնդիրների լուծման ուղիների և /կամ/ հնրավորությունների բացահայտում ցուցադրական մեկ կամ մի քանի ծրագրերի իրականացման միջոցով, այդ թվում՝
- Փորձնական ծրագրերի իրականացման հիմնական խնդիրները պետք է ցուցադրվեն կոնկրետ օրինակների վրա
- Էկոհամակարգային ծառայությունների տրամադրման, դրան դիմաց վճարների իրականացման համար անհրաժեշտ իրավական հիմքերը /արդյոք հնարավոր է դրանց իրականացումը ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում և եթե ոչ, ապա ինչ լուծումներ են պետք/, ինչպես նաև ֆինանսական մեխանիզմները և տնտեսական գործիքները,
- Էկոհամակարգերից ստացվող և ակնկալվող օգուտների տեսակները, գնահատման նպատակները
- ԷԾ-ների այն տեսակները, որոնք կարող են ներառվել շուկայական տնտեսության մեջ
- ԷԾ-ների գնահատման տնտեսական մեթոդները /օրինակ՝ օգտագործման և չօգտագործման արժեքների գնահատման, Ստվերային գների, Ծախսային մեթոդներ և այլն/
- ԷԾ-ների տրամադրողներին/պահպանողներին, “շահողներին” և “կորցնողներին”, շահառուների այն խմբերը, որոնք ստանում են օգուտների զգալի հոսքեր, և որոնցից տարբեր մեխանիզմների միջոցով հնարավոր է ստանալ ֆինանսական միջոցներ
- Հնարավոր ինչ սխեմաներ կան և դրանց օգտագործման հնարավորությունները
- ԷԾ-ների տնտեսական գնահատում/արժեքի որոշում -Էկոհամակարգից ստացվող օգուտների ընդհանուր արժեքի որոշում, Էկոհամակարգերի վիճակի փոփոխության հանգեցնող գործողություններից/ներագդեցությունից ստացվող մաքուր օգուտների որոշում, ծախսերի և օգուտների բաշխման վերլուծություն

- Էկոհամակարգերի պահպանության համար ֆինանսավորման պոտենցիալ աղբյուրների որոշում
- ԷԾ-ների գծով միջազգային փորձի կիրառման հնարավորությունները Հայաստանում՝ վերհանելով խոչընդոտող կամ խանգարող հանգամանքները և պատճառները:

5. Հղումներ

1. Site assessment report – General Description of Karaberd gold mine location and neighboring communities, main ecosystem services and assessment of the environmental impact of mining activities – 2013;
2. Social-economic situation and development trends of Armenia and Lori region – 2013;
3. Review and Gap analysis of RA legislation related to environmental protection: Focus on Assessment, valuation and Economic Instruments – 2013;
4. Ecosystem Services and their Role in Poverty Alleviation in Armenia –A case study of Karaberd Gold Mine- February 2014;
5. Economic Valuation of Ecosystem Services – regulatory options and recommendations for the drafting of the framework law on environmental protection – January 2014.
6. “Support Development of Biodiversity Conservation Policies and Practices in Mountain Regions of the South Caucasus” UNDP 2014
7. A quick guide to the economics of ecosystems and biodiversity for local and regional policy makers. Geneva: The Economics of Ecosystems and Biodiversity (ԷԿՏՆ). <http://www.ԷԿՏՆ web.org>2010 .
8. Assessment of Economic Contribution of Fresh Water Ecosystems to Hydropower and Dams Development in the Kura-Aras River Basin in Armenia Final Report January 2015 Prepared by Ani Haykuni And Marlon Flores
9. Ecosystem services checklists, IPIECA, Biodiversity 2011
10. Introduction of payment for ecosystem services schemes in upper Hrazdan pilot river basin of Armenia, Geoinfo, Yerevan 2011
11. Payments for Ecosystem Services: A Best Practice Guide, DEFRA 2013
12. Policy and Management Tools for Ecosystem Services, Pavel Sukhdev, UNDP
13. RA Draft Environmental Framework Law

14. Scoping study of economic significance of ecosystems and biodiversity (ԷԿՏՆ) of the forestry sector of Armenia, Armen Gevorgyan, Yerevan 2014
15. The Economic Valuation of Ecosystem Services
UNDP-UNEP Poverty & Environment Initiative, Presentation, Camille Bann, Yerevan 2014
16. А. Арутюнян, "Поддержка биоразнообразия горных районов Южного Кавказа в области политики и сохранения развития практики" Экономическая оценка биоразнообразия и экосистемных услуг, Yerevan 2012.

Հարցազրույցներ հեռախոսով

1. Նունե Հարությունյան, ԿՏԲԿ տնօրեն
2. Սիրանուշ Գալստյան, WWF Հայաստան ծրագրերի համակարգող
3. Մերի Գալստյան, ծրագրի ղեկավարի տեղակալ, «Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն», ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի ծրագիր, Հայաստանի ամերիկյան համալսարան
4. Բենիկ Զաքարյան, «Գեոինֆո» ՀԿ տնօրեն
5. Քրիստինա Տերեշչատովա, ՄԱԶԾ / ՄԱԲԾ ԱԲՆ ծրագրերի օգնական
6. Էրիկ Գրիգորյանը, Էկոհամակարգային ծառայությունների միջազգային փորձագետ
7. Լուիզա Գևորգյանը, Էկոհամակարգային ծառայությունների տեղական փորձագետ

6. Հավելվածներ

Հավելված 1. ԷԾՎ սխեմաների սկզբունք

Էկոհամակարգային ծառայություն (ներ):	Օրինակ՝ Ջրի որակ, կլիմայակարգավորիչ գործառույթ, վայրի բնության կենսամիջավայր, լանդշաֆտի գեղագիտական արժեք
Պիլոտային տարածք	«Մևան» ազգային պարկ, «Դիլիջան» ազգային պարկ, «Խոսրովի անտառ» պետական արգելոց և այլն:
ԷԾՎ նպատակ	ԷԾՎ իրականացման համար հատուկ թիրախներ
ԷԾՎ սխեմա	Մասնավոր-մասնավոր, մասնավոր-հանրային, հանրային-հանրային, հանրային-մասնավոր
Գնորդ (ներ):	Մասնավոր ընկերություն, կառավարության գործակալություն, բնապահպանական ՀԿ
Վաճառող (ներ):	Ֆերմերներ, անտառտարածքների մասնավոր սեփականատերեր, պահպանվող տարածքների կառավարման մարմիններ
Միջնորդ (եթե կիրառելի է):	Բնապահպանական ՀԿ, կառավարության գործակալություն
Հիմնական գիտելիքների մատակարարներ:	Կարգավորող մարմին, հետազոտական կենտրոններ, ակադեմիական հաստատություններ
Վճարումների մասին տեղեկատվություն	Վճարումների մակարդակ և ժամկետներ, բնույթ
Աշխարհագրական մասշտաբ:	Ջրհավաք ավազան, ենթաավազաններ
Պայմանագրոց սահմանված ժամկետ:	Ժամկետներ- օրինակ՝ 10 տարի, 15 տարի, անժամկետ
Համաձայնեցված միջամտություններ:	Բուֆերային շերտեր, թփերի-մացառների շարքից կազմված բնական պատնեշ, ծառերի պլանտացիա, թափոնների պահեստավորում, հանրության մուտքի ապահովման միջոցներ
Կոմպրոմիսների նվազեցմանն ուղղված միջոցառումներ	Մոնիտորինգի շրջանակ
Էկոհամակարգային ծառայությունների ցանկացած «փաթեթ»	Մեկ մեկին, մեկը շատերին, շատերը մեկին
վճարման Մոտեցման տեսակ:	Ուղղակի, անուղղակի վճարներ, կանխիկ, բնեղենով և այլն:



**Integrated Management of Biodiversity,
South Caucasus IBIS**

GIZ Programme Office Armenia

4/1 Baghramyan Street
0019 Yerevan
Republic of Armenia
T +374 (0)10 581877
www.giz.de
www.biodivers-southcaucasus.org

Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH